



Հաստատում եմ

ԵԳՊԱ ռեկտոր

Ս. Է. Բասբեկյան

«02» 06 2014թ.

ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ
ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ

ԿԱՐԳ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգը մշակված է հիմք ընդունելով ՀՀ ԿԳ նախարարի 2011թ. հոկտեմբերի 31-ի № 1197 - Ն հրամանի հավելված՝ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգը:
2. Սույն կարգով սահմանվում է Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում (այսուհետ՝ ԵԳՊԱ) բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով սովորողների ամփոփիչ ատեստավորման կազմակերպումը և անցկացումը:

II. Ամփոփիչ ատեստավորման ձևերը

3. Ամփոփիչ ատեստավորումը ներառում է գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման հետևյալ ձևերը.

Բակալավրի կրթական ծրագրով՝

- ամփոփիչ քննություն,
- ավարտական աշխատանքի պաշտպանություն:

Մագիստրոսի կրթական ծրագրով՝

- մագիստրոսական թեզի պաշտպանություն:

4. Ըստ մասնագիտությունների ավարտական աշխատանքը ենթադրում է.

- «Դիզայն» մասնագիտության գծով ավարտական աշխատանքը ներառում է՝ ուսանողի կողմից կատարված նախագիծը, նախագծի բացատրագիրը և մանրակերտը:

- «Հագուստի մոդելավորում» մասնագիտության գծով ավարտական աշխատանքը ներառում է՝ ուսանողի կողմից կազմված պորտֆոլիոն, որը ներառում է նաև նախագծի քաղաքագիրը և առնվազն մեկ ավարտուն մոդել:
- «Համակարգչային գեղարվեստական նախագծում» մասնագիտության գծով ավարտական աշխատանքը ներառում է՝ ուսանողի կողմից կազմված պորտֆոլիոն, որը ներառում է նաև նախագծի քաղաքագիրը և գրաֆիկական ու գունային լուծումներով կատարված նախագիծը:
- «Կիրառական արվեստ» մասնագիտության գծով ավարտական աշխատանքը ներառում է՝ ուսանողի կողմից նյութի վրա կատարված աշխատանքը, աշխատանքի քաղաքագիրը և պլանշետի վրա կատարված ինտերիերում կամ էքստերիերում աշխատանքի տեղակայման նախագիծը:
- «Գրաֆիկա», «Քանդակագործություն» և «Գեղանկարչություն» մասնագիտությունների գծով ավարտական աշխատանքը ներառում է՝ ըստ նախապես հաստատված էսքիզի ուսանողի կողմից կատարված աշխատանքը և աշխատանքի քաղաքագիրը, որը ներառում է նաև աշխատանքի լուսանկարները:
- «Կերպարվեստի պատմություն և տեսություն» մասնագիտության գծով ավարտական աշխատանքը ներառում է՝ ուսանողի կողմից կատարված արվեստի պատմության և/կամ տեսության, ինչպես նաև որևէ արվեստի գործիչի աշխատանքների վերաբերյալ ավարտուն վերլուծական աշխատանք:

5. Ըստ մասնագիտությունների մագիստրոսական թեզը ենթադրում է.

- «Դիզայն» մասնագիտության գծով մագիստրոսական թեզը ներառում է՝ ուսանողի կողմից կատարված հետազոտական աշխատանքը նախագիծը և մանրակերտը:
- «Հագուստի մոդելավորում» մասնագիտության գծով մագիստրոսական թեզը ներառում է՝ ուսանողի կողմից կատարված հետազոտական աշխատանքը և առնվազն մեկ ավարտուն մոդել:
- «Համակարգչային գեղարվեստական նախագծում» մասնագիտության գծով մագիստրոսական թեզը ներառում է՝ ուսանողի կողմից կատարված հետազոտական աշխատանքը և գրաֆիկական ու գունային լուծումներով կատարված նախագիծը:
- «Կիրառական արվեստ» մասնագիտության գծով մագիստրոսական թեզը ներառում է՝ ուսանողի կողմից կատարված հետազոտական աշխատանքը,

խեցեգործական աշխատանքը և պլանշետի վրա կատարված ինտերիերում կամ էքստերիերում աշխատանքի տեղակայման նախագիծը:

- «Գրաֆիկա», «Քանդակագործություն» և «Գեղանկարչություն» մասնագիտությունների գծով մագիստրոսական թեզը ներառում է՝ ուսանողի կողմից կատարված հետազոտական աշխատանքը և ըստ նախապես հաստատված էսթիզի կատարված աշխատանքը:
- «Կերպարվեստի պատմություն և տեսություն» մասնագիտության գծով մագիստրոսական թեզը ներառում է՝ ուսանողի կողմից կատարված արվեստի պատմության և/կամ տեսության, ինչպես նաև որևէ արվեստի գործիչի աշխատանքների և ուղղությունների վերաբերյալ ավարտուն հետազոտություն պարունակող աշխատանք:

6. Ամփոփիչ քննությունը անց է կացվում բանավոր:

7. Ամփոփիչ քննության հարցաշարերը, բակալավրիատի ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզերի թեմաները կազմում են մասնագիտական ամփոփիչ քննության հարցաշարերը ուսանողներին են տրամադրվում ամփոփիչ քննությունից առնվազն 3 ամիս առաջ:

8. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները թողարկող ամփոփիչ ներկայացմամբ հաստատվում են ֆակուլտետային խորհրդի նիստում: Ավարտական աշխատանքի թեման ուսանողին է տրամադրվում ավարտական աշխատանքի պաշտպանությունից առնվազն 6 ամիս առաջ, իսկ մագիստրոսական թեզի թեման ուսանողին է տրամադրվում առաջին կուրսի առաջին կիսամյակի ընթացքում և վերջնականապես հաստատվում է մագիստրոսական թեզի պաշտպանությունից առնվազն 6 ամիս առաջ:

9. Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի կատարման համար նշանակվում է դեկավար:

III. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովները

10. «Կերպարվեստի պատմություն և տեսություն» առարկայի ամփոփիչ քննության հանձնաժողովը (նախագահ, տեղակալ(ներ) և անդամներ) կազմավորվում է ԵԳՊԱ-ի բոլոր մասնագիտությունների և ուսուցման բոլոր ձևերի համար:

11. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության հանձնաժողովները (նախագահ, տեղակալ(ներ) և անդամներ) կազմավորվում է յուրաքանչյուր մասնագիտության գծով՝ ուսուցման բոլոր ձևերի համար:

12. Ամփոփիչ քննության, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության հանձնաժողովների նախագահներին ԵԳՊԱ-ի ռեկտորի առաջարկությամբ նշանակում է ՀՀ կրթության և գիտության նախարարը: Նախագահը ընտրվում է համապատասխան ոլորտի (բնագավառի) կազմակերպությունների կամ գիտական հիմնարկների մասնագետներից և գիտնականներից, ով չի հանդիսանում ԵԳՊԱ-ի հիմնական աշխատող և երեք տարի անընդմեջ չի հանդիսացել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ:
13. Ամփոփիչ քննության, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության հանձնաժողովների նիստերը արձանագրում է քարտուղարը, որը հանձնաժողովի անդամ չէ և նշանակվում է ռեկտորի հրամանով:
14. Ամփոփիչ քննության, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության հանձնաժողովների կազմերը հաստատում է ռեկտորը, ամփոփիչ քննության, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության հանձնաժողովների քննությունների և պաշտպանությունների մեկնարկից առնվազն 10 օր առաջ:
15. Ամփոփիչ քննության հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ԵԳՊԱ-ի ռեկտորը կամ ուսումնագիտական գծով պրոռեկտորը, «Կերպարվեստի պատմության և տեսության» ամբիոնի վարիչը և պրոֆեսորադասախոսական անձնակազմի երկու ներկայացուցիչ, տվյալ ոլորտի կազմակերպությունների, գիտական հիմնարկների, գերատեսչությունների և այլ բուհերի մասնագետներ:
16. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության հանձնաժողովների կազմերում ընդգրկվում են ԵԳՊԱ-ի ռեկտորը կամ ուսումնագիտական գծով պրոռեկտորը, համապատասխան ֆակուլտետի ղեկանը կամ նրա տեղակալը, ամբիոնների վարիչները, պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ, տվյալ ոլորտի կազմակերպությունների, գիտական հիմնարկների, գերատեսչությունների և այլ բուհերի մասնագետներ:
17. Ամփոփիչ քննության, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության հանձնաժողովների կազմերի առնվազն 50 տոկոսը չպետք է լինեն ԵԳՊԱ-ի հիմնական աշխատակիցներ: Ակադեմիայի ռեկտորի գրավոր հիմնավորմամբ, ՀՀ կրթության և գիտության նախարարի թույլտվությամբ հանձնաժողովի կազմը կարող է ձևավորվել այլ համամասնությամբ:
18. Ամփոփիչ քննության, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության հանձնաժողովների աշխատանքի ժամանակացույցը, համաձայնեցված հանձնաժողովի նախագահի հետ, ֆակուլտետի ղեկանի ներկայացմամբ հաստատում է ԵԳՊԱ-ի ուսումնագիտական գծով պրոռեկտորը և ամփոփիչ քննություններից,

ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունից առնվազն 10 օր առաջ տեղեկացվում ավարտական կուրսի ուսանողներին:

IV. Ամփոփիչ առեստավորման կազմակերպումը և անցկացումը

19. Ամփոփիչ քննությանը, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությանը թույլատրվում են այն ուսանողները, ովքեր ավարտել են հիմնական մասնագիտական կրթական ծրագրով ուսուցման լրիվ դասընթացը և հաջողությամբ հանձնել ուսումնական ծրագրով (պլանով) նախատեսված բոլոր քննություններն ու ստուգաթղթերը:
20. Ամփոփիչ քննությունից «անբավարար» գնահատական ստանալը չի զրկում ուսանողին ավարտական աշխատանքը պաշտպանելու իրավունքից:
21. Ավարտական աշխատանքների պաշտպանությունը և ամփոփիչ քննությունը անցկացվում են ուսումնական պլանով սահմանված ժամկետներում.
 - ամփոփիչ քննությունը՝ փետրվարի 20-ից մինչև մարտի 5 ընկած ժամանակահատվածում,
 - ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունը՝ մայիսի 20-ից մինչև հունիսի 5-ը ընկած ժամանակահատվածում:
22. Ամփոփիչ քննությունն անցկացվում է հետևյալ ընթացակարգային պահանջների համաձայն.
 - Ամփոփիչ քննությունն անցկացվում է տոմսերով ուսումնական ծրագրին և բակալավրի որակավորմանը ներկայացվող պահանջներին համապատասխան:
 - Բանավոր քննությանը նախապատրաստվելու համար յուրաքանչյուր շրջանավարտին տրվում է առնվազն 20 րոպե ժամանակ:
 - Ամփոփիչ քննական օրվա տևողությունը չպետք է գերազանցի 8 ժամը:
 - Ամփոփիչ առեստավորման ընթացքը ձայնագրվում և արձանագրվում է:
23. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունը անցկացվում է հետևյալ ընթացակարգային պահանջների համաձայն.
 - Ավարտական աշխատանքի, մագիստրոսական թեզի բովանդակությունը ներկայացնելու համար յուրաքանչյուր շրջանավարտին տրվում է մինչև 20 րոպե ժամանակ:
 - Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության տևողությունը օրեկան չպետք է գերազանցի 8 ժամը:

- Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության ընթացքը արձանագրվում է, իսկ «Գերպարվեստի պատմություն և տեսություն» մասնագիտության ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության ընթացքը նաև ձայնագրվում է:

24. Ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի պաշտպանության և ամփոփչ քննության արդյունքները գնահատվում են ըստ ԵԳՊԱ-ի գնահատման համակարգի և հայտարարվում են նույն օրը, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստի արձանագրությունը կազմելուց հետո՝ 1 ժամվա ընթացքում:
25. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը կայացնում է որոշում շրջանավարտին համապատասխան որակավորում շնորհելու և նրան բարձրագույն կրթության դիպլոմ տալու մասին: Անբավարար արդյունքի դեպքում շրջանավարտին որակավորում չի շնորհվում և բարձրագույն կրթության դիպլոմ չի տրվում:
26. Գերազանցության դիպլոմ տրվում է բակալավրիատում միջին որակական գնահատականի (ՄՈԳ) հնարավոր առավելագույն արժեքի 90%-ը, իսկ մագիստրատուրայում՝ 95%-ն ապահովելու դեպքում, ամփոփիչ քննությունը միայն «գերազանց» գնահատականով հանձնած շրջանավարտներին:
27. Շրջանավարտի գիտելիքների գնահատման մասին որոշումը ընդունվում է հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից նշանակված գնահատականների միջին թվաբանականով:
28. Ավարտական աշխատանքի, մագիստրոսական թեզի պաշտպանության և ամփոփիչ քննության հանձնաժողովների բոլոր որոշումները քարտուղարի կողմից արձանագրվում են արձանագրությունների հատուկ մատյանում: Արձանագրությունները ստորագրում են հանձնաժողովների նախագահները և նիստերին մասնակցած անդամները: Արձանագրությունները պահվում են ԵԳՊԱ-ի ուսումնական վարչությունում և մեկ տարի անց հանձնվում արխիվ: Արձանագրության մեջ նշվում են ավարտական աշխատանքի և ամփոփիչ քննության գնահատականները, շնորհված որակավորման աստիճանը և ավարտողի դիպլոմի տեսակը:
29. Ամփոփիչ քննությունից «անբավարար» գնահատական ստացած ուսանողին իր ցանկությամբ անվճար տրվում է սահմանված ձևի ակադեմիական տեղեկանք: Ակադեմիական տեղեկանքը տրվում է շրջանավարտի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից ռեկտորին դիմում ներկայացնելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:
30. Ավարտական աշխատանքը կամ մագիստրոսական թեզը չպաշտպանած կամ ամփոփիչ քննությունը չհանձնած կամ «անբավարար» ստացած շրջանավարտին թույլատրվում է վերահանձնել (կրկնել) ավարտական աշխատանքի, մագիստրոսական թեզի պաշտպանությունը կամ ամփոփիչ քննությունը հաջորդ ուսումնական տարվա ավարտին կամ հետագա տարիներին՝ այն առարկաներից, որոնք նախատեսված են եղել նրա ավարտման տարում գործող ուսումնական պլանով: Ավարտական աշխատանքի

վերահանձման դեպքում շրջանավարտը կցվում է համապատասխան ամբիոնին և ստանում ավարտական աշխատանքի նոր թեմա: Ամփոփիչ քննության վերահանձնումը կատարվում է միայն այն առարկաներից, որոնց քննությանը չեն ներկայացել կամ ստացել են «անբավարար» գնահատականներ:

31. Ամփոփիչ քննությանը, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի հանձնաժողովների հաշվետվությունը հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ քննարկվում է ԵԳՊԱ-ի գիտական խորհրդում և մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ արված առաջարկությունների հետ միասին ամփոփիչ ատեստավորման ավարտից հետո երկշաբաթյա ժամկետում ներկայացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարություն: Հաշվետվության պատճենը պահվում է ԵԳՊԱ-ի ուսումնական վարչությունում:

V. Ամփոփիչ ատեստավորման արդյունքի բողոքարկման ընթացակարգը

32. Ուսանողը կարող է բողոքարկել ամփոփիչ քննության, ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի գնահատականը ատեստավորման համապատասխան հանձնաժողովի նախագահին, արդյունքները հրապարակելուց հետո՝ 1 ժամվա ընթացքում:

33. Գրավոր բողոքը ներկայացվում է հանձնաժողովի նախագահին, որի քննարկումը կազմակերպվում է նույն օրը:

34. Գրավոր բողոքի քննարկմանը մասնակցում են ԵԳՊԱ-ի վարչական անձնակազմի, տվյալ հանձնաժողովի անդամ չհանդիսացող աշխատակիցը և ուսանողական խորհրդի ներկայացուցիչը, որոնց թեկնածությունները նախապես հաստատվում են հաստատության ղեկավարի կողմից:

35. Բողոքարկողի ներկայությամբ լսվում է պատասխանի ձայնագրությունը, որից հետո բաց քվեարկությամբ, հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, կայացվում է որոշում՝ գնահատականը թողնել անփոփոխ կամ գնահատականը բարձրացնել:

36. Ընդունած որոշման վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրվում է հանձնաժողովի նախագահի, անդամների, հաստատության վարչական անձնակազմի, ուսանողական խորհրդի ներկայացուցիչների և շրջանավարտի կողմից: Կայացված որոշմանը անհամաձայնություն հայտնելու դեպքում գրավոր ներկայացվում է հատուկ կարծիք, որը կցվում է արձանագրությանը:

37. Գնահատականի փոփոխման դեպքում արձանագրությունների հատուկ մատյանում կատարվում է համապատասխան գրառում: